

ընկաւ որ կերպիւ քաշել սաւած են . նա մանաւանդ երեք աղբաց գերեզմանատանց սահմանադրութիւնը շանակելէ զինի , գերեզմանադրութիւն անգամ նշանակելով աւելի օրինաւոր ըրած են , որ համարէ թէ Վսե մափայլ Տէր , յատուկ յատուածաւ կոյս կողմանէ եղած է այդ , և Արքայի խնդիրը բողոքովն լուծելու համար պատահած է այդ , թէ և իրենք չեն զգացած : Արեւմտեան Տէրք իմ , քաջ նկատեցէք սա իրենց ճանապարհ ըսած տեղը ցուցնելու համար քաշած սա հաստ և սեւ գծին , որ Հայոց գերեզմանատան մէջէն կ'անցնի , մեծապէս շնորհակալ պէտք է ըլլամք նոյն Դրանչիսկեաններէն որ զմեզ մեծ տարակուսութենէ և աշխատութենէ ազատեցին . իրենք ահա նոյն գծովը օրինաւորապէս հաստատած են թէ , նոյն ճանապարհ ըսած տեղը ճշգրտապէսնքն իւրիւր-իւրած չէ , այլ գերեզմաններ են : —

« Ի՞նչ կ'ըսէք , ըսաւ Վսեմ . Վալի փաշայն . ի՞նչ բանի վրայ հաստատելով զայդ կ'ըսէք , և ըսածներդ ինչով կրնաք ստուգել և հաստատել : —

« Ի՞մենայն զխրութեամբ , վասն զի , ահա նոյն գծով ստուգուած է արդէն , ըսաւ Արքայան Պատրիարքն , և ինձ ստուգելու աշխատութիւն չէ մնացեր . ըսելով մտոր նոյն սեւ գծին վրայ գնելով ցուցուց Վսեմ . Վալի փաշայն Վատինաց քաշած յատակա-

գծին մէջ նշանակուած Հայոց մասին մէջ այն գերեզմանադրութիւն , որուն իսկ կիսովն վրայէն քաշուած էր նոյն եղջերուաքաղ ճանապարհը ցուցնող հաստ սեւ գիծը . և ըսաւ . — Վաջ գիտեցէք Տէրք իմ , նայեցէք ինչ օրինաւոր պատահած է այս , մի թէ ուրիշ վկայութեան և ըստուգութեան կարօտութիւն մնաց դեռ , ահաւասիկ իրենք իրենց ձեռքը ստուգած են թէ նոյն ճանապարհ ըսուած տեղը գերեզմանատուն է . և այժմեան գտնուած ճանապարհը ետքէն անցու գործով հաստատուած է , քանի որ իրենք իրենց ձեռքը այդպէս հաստատապէս վկայած են , ալ ուրիշ ոչ վկայութեան և ոչ ուրիշ ստուգութեան կարօտութիւն մնաց , ալ թող Վատինք ինչ որ կ'ուզեն թող ըսեն . ահա լիակատար ստուգեցաւ գործն , և այն իրենց բերած յատակագծովը : Եւրոպացու Վսեմ , Վալի փաշայն և բոլոր ներկայ գտնուողք , և ըսին . — Ճիշտ այդպէս է , և այս յայտնի սպասոյց է . ուրեմն յայտնի անիրաւութիւն է Վատինաց ըրածը և խօսածը , — ըսելով բոլոր այս եղելութիւնը հասկցուցին Պ . Հիւպատոսին , որ արդէն խօսքերուն եղանակէն և յատակագծին վրայ եղած բնութեաններէն և մատնացոյց շարժմանքներէն կիսով չափ հասկցած էր , և նա սկսաւ ժպտել :

(Եւրոպացու-Վսեմ :)

Ա Ղ Օ Թ Ա Ի Ո Ր Ն
Ի Լ Ե Ա Թ Ն Ն Զ Ի Թ Ե Ն Ե Ա Յ

« Այլ է սա Թագաւոր փառաց տէր Յորու թեանց » :
ՍԱՂ. ԵՐԱՌ

Այլ է դա սով , ի թեւս թեթեւս , դա զօրութեամբ բուռն և սաստիկ
Մինչ Անանհին ի սուրբ աթոռ , յերկրէ սրանայ արդ աւանիկ ,
Գմբէթ վերին , գունդ և կամար , երկնից բարձրը նոյն իսկ խորան
Ընդ վեհութեամբ գորոյն գաղուստ կան ի յերեք և ի սասանս :
Դա թագաւոր ինքն է փառաց
Տէր բարեկար մահկանացուաց :

Ո՛վ դա արդեօք, որ զերբ արիի, ընդ դաշտ երկնից, փայլեալ այսօր
Լուսաշողող զհրեալ զամպրս, ճարիւն 'ի թռիչ հսկայազոր,
Յասուածափառ երեւացն՝ հասանին բոց, հուր և շանթիք
Ընդ այն փախչին՝ ահա 'ի դող, արիիցն բոցք շողջուղնիք:

Դա ինքն փառաց է թագաւոր
Երկնի, երկրի տէր ի՛ր քնաղօր:

Վասն է՛ր դորայն կարմիր վառքն այսք աստուածեան 'ի դոյն բոտր
Է՛ր գանգրադէղ հերացն հայոցք ծփեալ զուլտիւն իւր քլանթնօր,
Ընորհաց ահա տեղ ո՛ն տեղան սակի կաթիլք, և ծաւալին
Յերկն 'ի վայր յերկիրս ստորին 'ի փրկութիւն մարդկանս ալին:

Չի դա ինքն է արքայն փառաց
Բարերար մեծ մահկանացուաց:

Է՛ր դորայն ձորձք և պատմուծան 'ի դոյն արեան ո՛ն, 'ի թափմաւ
Դեռ ծածունին ահա ծալ ծալ, արիփաձեմն ընդ կամարաւ,
Եւ արեան շիթք դեռ նիչ դորայն 'ի սիրս, 'ի լանջ հաշտանիկ
Արպէս ակունս լուսաշողուն փայլին, շողան զի՛ գեղեցիկ:

Չի թագաւոր է դա փառաց
Տէր բարերար մահկանացուաց:

Իսկ զինչ բարբառ ահեղագոչ, որ ընդ երկնից քառեակ սրտս
Դորդ առեալ դեռ սակաւին աստ, անդ ընտ սաստիկ որտս,
* Իշխանութիւնք, և զօրութիւնք, աթոռք երկնից, պէտք բարձրութեան
Օն, համարձէք զդրունըս ձեր, բացէք զդրունն անմահութեան:

Չի թագաւոր արդ զայ փառաց
Բարերար մեծ մահկանացուաց:

Ընդ այս բարբառ երկնազրդօրդ, գահն Ամենին և մեծ գարեթ
Որքս առեալ տայ արձագանս, ըզնայն կրկնեալ ձայն հետ ընդ հետ,
Եւ սուրբ շրթունք անմահական, հծծեն, մնեն սիրտ 'ի յերկր
" Ո՛վ սա արդեօք արքայ փառաց, և զօրութեանց ո՞վ սա մեծ տէր ւո

—Սա թագաւոր ինքն է փառաց
Բարերար մեծ և մահացուաց:

Մահկանացուաց մեծ բարերար, այն դու ես ո՞վ մեծդ Աստուած
Չի դու և եթ, լոկ առ տէր մեր, ողբի աղգի տարար վշտաց,
Հայր և Աստուած, քն է երկինք, քն և այդ դրունք, քնդ միշտ միայն
Քեւ ընդ դրունարդ մարդիկ մտցեն, միշդ յայտնհետ հօրդ յօթեան:

Քանզի միայն դու ես Աստուած
Հայր բարերար մահկանացուաց:

Իսկ արդ 'ի մէջ դու որ մեկնիտ, ո՞վ տէր Աստուածդ արդարութեան
Բայց տիրազգեաց մեր այս սրտից, միտթար կացցէ ո՞վ քո փախան,
Կամ ո՞վ արդեօք տառաղեսցէ, քո այս փոքրիկ հոտ աղիկար
Եւ 'ի խաղաղ ժողովեսցէ 'ի փրկութեան քո անողար:

Ո՛հ, սուրբ Հոգին ճշմարտութեան
Չի այս իսկ էր քո վերջն բան:

Ընդ այդ ուղի լուսաշաւիղ, յոր դնադ այժմիկ ո՞վ մեծդ Աստուած
Ո՛վ մեղ լիցի առաջնորդ քաջ, կամ ո՞վ կայցէ ըզմեր ձեռաց,
Եւ զմեղ տարեալ ո՞վ հանգուցէ, յարքայութեանդ անդ 'ի խորան
Չոր սրագոցայ քնդ միշտ երկիր, դու խոտացար տալ յաւիտեան:

Ղոյն իսկ հոգին կենդանարար
Հէ՛ղ մահացուացս տէր բարերար:

Դու խոտացար շոյտ առաքել, զօրութիւն նոր յերկն յերկիր
Եւ միկըտեղ ըզմեղ 'ի լոյս, և 'ի կենաց բաժակ հրաղբ,
Ուստի օձցին էրբ մեր ճակատք, և այս մեր սիրտք միկըտեսոյցին
Այնու կենաց անմահական լուսով քոյով աստուածային:

Որով լիցուք էրբ մեք տաճար
Սրբոյ հոգւոյդ անմահարար:

Ոհ, սրտապինա ես գոչեցի . . . երբ շրթուներս էր 'ի թրթրու :
Ատուածային յաւին իմ մեղք ոհա ձայն . մեղձ և սիրալիր ,
«]Պարմանիք ինձ երկիրպարու . ճն 'ի լեռնէք էջ Ձիթենեաց
Երթ և հանգիր յԵրուսաղէմ , մինչ զգեւուցուս զու 'ի բարձանց

Չօրութիւն նոր կենդանարար

Չի սուրբ հոգւոյն լիցիս տաճար ո :

Լըւայ . . . և զեռ ես պըշուցեալ կայի 'ի նա երբ սիրալատ
Ահա յաչացս կարու զնա բարէ , մի անպ սպիտակախառ .
Յոյս մեծ 'ի սիրտ , ճսկատ եղեալ խոնարհութեամբ ես 'ի գեափն
Գոհ զտեառնէ , յԵրուսաղէմ ապա իջի զըւարթագին :


Եւ աստ սպասեմ ես դալըտեան

Սրբոյ Հոգւոյն ճշմարտութեան :

Կրթալիք Տ . Սինատեան :

1871 Սայիս 6

յՂԵՐՄԱՍՂԷՄ



Հ Ա Ր Յ Ա Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ե Ի

ՊԱՐԳԵԻԱԲԱՇՈՒԹԵԱՆ ՀԱՆԻԿԵՍ

Ներկայ ամսոյս 9—17 անընդհատ
կատարուեցաւ Ս . Ըթուոյս յա-
ռանգաւորաց Վարժարանի հարցա-
քննութիւնը , ըստ իւրաքանչիւր մա-
տակարարեալ ուսմանց և լեզուաց :
Հարցաքննութիւնը հրատարակուին
լինելով այս մասին կանխաւ ազգա-
րարութիւն եղած էր՝ թէ միաբանից
և թէ այլ ուսումնասէր անձանց , յու-
րոց ոմանք երբեմնապէս և ոմանք
չարունակ պատուեցին վարժարանը
իրենց ներկայութեամբ և անաչառ
քննութիւն : Ըմենապատիւ Ս . Պատ-
րիարքը , իւր յոգնաթիւ զբաղմանց
սրտածառաւ , երկու օր միայն կարողացաւ
նախագահել հարցաքննութիւնը .
իսկ միւս աւուրց մէջ՝ սոյն պարտքը
անձանձրոյթ սիրով կատարեց Վեր-
իսահակ Ս . Ըքքեպիսկոպոսը :

Հարցաքննութեան աւարտումէն
զկնի , Ս . Սահակայ և Ս . Սերովպայ՝
երանաչնոր՝ թարգմանչաց տօնախրմ
բութեան օրը , կատարուեցաւ պար-
գեւաբաշխութեան հանդէսը , որուն
ներկայ էին , բաց 'ի Ս . Ըթուոյս Սի-
աբաններէն , նաեւ ականաւոր հայ-

ազգիք քաղաքիս , Բրուսիոյ հիւպաւ
տոսարանի դիւանագւպիրն , Սպիտլերի
հռչակաւոր Բնկերութեան անդամ-
ներէն ոմանք և Բուքրեշի նորեկ
հայ ուխտաւորք :

Հանդէսը սկսաւ Վարժարանի
հայկաբանութեան և դժագրութեան
դաստառ Պ . Կ . Եւաղըճեանի ատե-
նախօսութեամբ , որուն յաջորդեցին
յառանգաւորաց ճառերը , երկու-
հատ Հայերէն և մի հատ Վաղղիա-
րէն : Հայերէն կարդացողքն էին՝
Վէորգ Սարգսեան Ըրասկերցի և
Կարապետ Թովմասեան Չանազ-Վա-
լեցի , իսկ Վաղղիարէն՝ Պօղոս Յակո-
բեան Չանազ-Վալեցի : Կարդաց-
ուեցաւ նաեւ մի տաղաչափութիւն
Ս . Թարգմանչաց անեղծ յիշատակին
համար յօրինուած :

Երբ ճառախօսութիւններն աւար-
տեցան , Վարժարանի Տեսուչ Սեւ-
քիսեդեկ վարդապետն կարդաց աշա-
կերտաց անուանական ցուցակը , որ
պատրաստուած էր ո՛չ թէ դասական
կարգաւ , այլ անխորաբար իւրաքան-
չիւրոց աշխատասիրութեան և հար-
ցաքննութեան մէջ ստացած թուա-
նշաններուն համեմատ , ինչպէս որ
պարգեւներն կամ մրցանակներն իսկ՝
որոշուած էին նոյն համեմատութիւն :